



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 13(377) 25«հուլիսի»2019թ.**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	<b>ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
288	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 591-Ն որոշումը	
289	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի N 182-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 602-Ն որոշումը	
290	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի N 183-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 603-Ն որոշումը	
	<b>ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
291	««ԱՐՄԵՆ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՄՊԻՏԱԿԱԶՈՒՐ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N39-Ա որոշումը	
292	««ԻՄԱՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N40-Ա որոշումը	
293	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի N54-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ	

	հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N41-Ա որոշումը	
294	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի N55-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N42-Ա որոշումը	
295	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 25-ի N33-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N43-Ա որոշումը	
296	««Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտե Առաքելությանը Լեռնային Ղարաբաղում» տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման N0024 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 17-ի N 48Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N50-Ա որոշումը	
	<b>ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>	
	<b>ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ</b>	
297	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 7-Ն հրամանը	
298	«Աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանելու մասին» ԱՀ ֆինանսների և ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարների N 181-Ն և N 6-Ն համատեղ հրամանը	
299	Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից հունիս ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ	
300	ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից հունիս ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 հունիսի 2019թ.

N 591-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ  
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի NN 1 և 3.3 աղյուսակներում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1135-Ն որոշման N2 հավելվածի NN1 և 3.3 աղյուսակների ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ  
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ  
N2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ  
ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	-	-	-	-
			այդ թվում՝	-	-	-	-
<b>08</b>			<b>ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՑԹ ԵՎ ԿՐՈՆ</b>	-	-	25 000,0	25 000,0
	<b>1</b>		Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	25 000,0	25 000,0
		<b>1</b>	Հանգստի և սպորտի ծառայություններ	-	-	25 000,0	25 000,0
		<b>02</b>	Մարզական միջոցառումներ	-	-	25 000,0	25 000,0
<b>09</b>			<b>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>	-	-	(25 000,0)	(25 000,0)
	<b>2</b>		Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	(49 235,9)	(49 235,9)
		<b>1</b>	Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	-	-	(49 235,9)	(49 235,9)
		<b>03</b>	Պետական աջակցություն ԱՀ շրջանների պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություններին	-	-	(49 235,9)	(49 235,9)
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	-	-	(49 235,9)	(49 235,9)
	<b>6</b>		<b>Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ</b>	-	-	24 235,9	24 235,9
		<b>1</b>	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	24 235,9	24 235,9
		<b>06</b>	Դասագրքերի, ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ գրականության, նյութերի, մասնագիտական գրականության ձեռքբերում	-	-	24 235,9	24 235,9
			ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	-	24 235,9	24 235,9

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
 ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.3 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ  
 ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ  
 N2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.3 ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ  
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերի և կատարողների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
09	2	1	<b>Քաշաթաղի շրջանի վարչակազմ</b>	-	-	(49 235,9)	(49 235,9)
			«Քաշաթաղի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ	-	-	(49 235,9)	(49 235,9)
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	-	-	(49 235,9)	(49 235,9)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
 ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2019թ.

N 602-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և «Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ք ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի «Հանրային ծառայության առանձին տեսակների դասային աստիճանների (կոչումների) համապատասխանությունը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 30-ի N 46 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 182-Ն որոշման հավելվածը «Դատական ծառայության դասային աստիճաններ» և «Դատական կարգադրիչների ծառայության կոչումներ» վերտառությամբ սյունակներից հետո համապատասխանաբար լրացնել «ԱՀ քննչական կոմիտեի աշխատակազմում շնորհվող պետական ծառայության դասային աստիճաններ» և «ԱՀ քննչական կոմիտեում շնորհվող դասային աստիճաններ» վերտառությամբ սյունակներով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

<b>ԱՀ քննչական կոմիտեի աշխատակազմում շնորհվող պետական ծառայության դասային աստիճաններ</b>	<b>ԱՀ քննչական կոմիտեում շնորհվող դասային աստիճաններ</b>
պետական ծառայության 1-ին դասի բարձրագույն խորհրդական	արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական
պետական ծառայության 2-րդ դասի բարձրագույն խորհրդական	արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական
պետական ծառայության 1-ին դասի խորհրդական	արդարադատության առաջին դասի խորհրդական
պետական ծառայության 2-րդ դասի խորհրդական	արդարադատության երկրորդ դասի խորհրդական
	արդարադատության երրորդ դասի խորհրդական
պետական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայող	առաջին դասի խորհրդական
պետական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայող	երկրորդ դասի խորհրդական
	երրորդ դասի խորհրդական
պետական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայող	
պետական ծառայության 2-րդ դասի կրտսեր ծառայող	

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2019թ.

N 603-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՒԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 183-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և «Արցախի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի «Հանրային ծառայության առանձին տեսակների պաշտոնների խմբերի համապատասխանությունը սահմանելու մասին» N 183-Ն որոշման հավելվածը «ԼՂՀ ոստիկանության պաշտոններ» վերտառությամբ սյունակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ԱՀ քննչական կոմիտեում ծառայության պաշտոններ» վերտառությամբ սյունակ:

«	<b>ԱՀ քննչական կոմիտեում ծառայության պաշտոններ</b>	
	բարձրագույն	
	գլխավոր	
	առաջատար	
	կրտսեր	»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» հուլիսի 2019 թվականի

N 39-Ա

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
«ՄՊԻՏԱԿԱՋՈՒՐ» ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐԱԿԱՑԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ  
ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ  
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, 17-19-րդ, 29-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N53-Ն որոշումը և հաշվի առնելով «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի հուլիսի 11-ի հայտը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի Շրվական գյուղի տարածքում՝ Սպիտակաջուր գետակի 1614 մետրից 1405 մետր գետահատվածքներում (բնական ջրահոսք)՝ «ՄՊԻՏԱԿԱՋՈՒՐ» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2036 թվականի սեպտեմբերի 4-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2021 թվականի սեպտեմբերի 4-ը:

2. Հաստատել «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ՄՊԻՏԱԿԱՋՈՒՐ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 20-ից:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Մ. ՎԻՐԱԲՅԱՆ**

Հավելված  
Արցախի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը  
կարգավորող պետական հանձնաժողովի  
2019 թվականի հուլիսի 19-ի N 39-Ա որոշման

**«ԱՐՄԵՆ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  
«ՄՊԻՏԱԿԱԶՈՒՐ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի  
(հզորության) արտադրության լիցենզիայի**

**Պայմանները**

**(Լիցենզիա ԼԷ N 0005՝ տրված Արցախի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական  
հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 19-ի N 39-Ա որոշմամբ)**

**1. ԼԻՑԵՆԶԻԱՅԻՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

1) **Հանձնաժողով**՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.

2) **Լիցենզավորված անձ**՝ «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

3) **Լիցենզիա**՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.

4) **Շուկայի կանոններ**՝ Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.

5) **Տորս-մաժոր**՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

**2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 20-ից:

3. Լիցենզիան գործում է մինչև 2036 թվականի սեպտեմբերի 4-ը, որից՝

1) 2019 թվականի հուլիսի 20-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 4-ը կառուցման ժամանակահատվածն է.

2) մինչև 2036 թվականի սեպտեմբերի 4-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

### **3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ**

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի Շրվական գյուղն է:

### **4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 366 կիլովատտ հաշվարկային հզորությամբ «ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

### **5. ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒՆԵՎԿՏՐԱԿԱՑԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 1614 մետրից 1405 մետր.

2) հաշվարկային ելք՝ 0,25 խորանարդ մետր վայրկյանում.

3) հաշվարկային ճնշում՝ 204,5 մետր.

4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 366 կիլովատտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատոր - մեկ հատ.

2) հիդրոտուրբին - մեկ հատ:

### **6. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայտմասնակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և զծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի

կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի հունվարի 1-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «ՄՊԻՏԱԿԱՋՈՒՐ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ՝ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

36. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները՝ ըստ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգի և նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների:

37. Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող էլեկտրական ցանցի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող, Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող այլ Անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնման իրականացմանը:

## **7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՄԱՐՆԵՐ**

38. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

39. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

40. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

41. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

## **8. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ**

42. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

- 1) նախազգուշացում.
- 2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.
- 3) Լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

43. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

44. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 42-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

## **9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

45. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

46. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«ԱՐՄԵՆ-ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը.

(ընկերության անվանումը)

Ա.Ն. ք. Ստեփանակերտ, Զորգե 74

(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը՝

Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ համայնքի Շրվական գյուղն է:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» հուլիսի 2019 թվականի

N 40-Ս

ք. Ստեփանակերտ

**«ԻՄԱՍՍ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
«ՀԱԿ-2» ՓՈՔԸ ՀԻՂՐՈՒԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՑԻ  
(ՀՁՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱՂՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՍՄԱՂԵՂՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «գ» կետը, 17-19-րդ, 29-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N53-Ն որոշումը և հաշվի առնելով «ԻՄԱՍՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի հուլիսի 9-ի հայտը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. «ԻՄԱՍՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ համայնքի վարչական տարածքում՝ Աղավնո գետի 1521 մետրից 1411 մետր գետահատվածքներում (բնական ջրահոսք)՝ «ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2035 թվականի հուլիսի 12-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2020 թվականի հուլիսի 12-ը:

2. Հաստատել «ԻՄԱՍՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 20-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ



Հավելված  
Արցախի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը  
կարգավորող պետական հանձնաժողովի  
2019 թվականի հուլիսի 19-ի N 40-Ա որոշման

**«ԻՄԱՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  
«ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի  
(հզորության) արտադրության լիցենզիայի**

#### **Պայմանները**

**(Լիցենզիա LE N 0006՝ տրված Արցախի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական  
հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 19-ի N 40-Ա որոշմամբ)**

#### **1. ԼԻՑԵՆԶԻԱՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.
  - 1) **Հանձնաժողով՝** Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով.
  - 2) **Լիցենզավորված անձ՝** «ԻՄԱՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.
  - 3) **Լիցենզիա՝** Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է փոքր հիդրոէլեկտրակայան կառուցելու և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեություն իրականացնելու վերջինիս իրավունքն ու պարտականությունը.
  - 4) **Շուկայի կանոններ՝** Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթ, որով կանոնակարգվում են էլեկտրաէներգետիկական համակարգում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, համակարգի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.
  - 5) **Ֆորս-մաժոր՝** արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությանը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

#### **2. ԼԻՑԵՆԶԻԱՑԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 20-ից:
3. Լիցենզիան գործում է մինչև 2035 թվականի հուլիսի 12-ը, որից՝
  - 1) 2019 թվականի հուլիսի 20-ից մինչև 2020 թվականի հուլիսի 12-ը կառուցման ժամանակահատվածն է.

2) մինչև 2035 թվականի հուլիսի 12-ը՝ էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:

4. Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ժամանակահատվածը (ժամկետը) երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում հայտ է ներկայացնում Հանձնաժողով:

### **3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ**

5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ համայնքի վարչական տարածքն է:

### **4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒՅՈՒՆ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 800 կիլովատտ հաշվարկային հզորությամբ «ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:

### **5. ՓՈՔՐ ՀԻՂՐՈՒՆԵԿՏՐԱԿԱՑԱՆԻ ՏԵԽՆԻԿԱՏԵՄԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 1521 մետրից 1411 մետր.

2) հաշվարկային ելք՝ 1,0 խորանարդ մետր վայրկյանում.

3) հաշվարկային ճնշում՝ 99,610 մետր.

4) փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 800 կիլովատտ:

8. Լիցենզիայի գործողության ընթացքում «ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր:

9. «ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտից հետո էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվելու է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատոր-2 հատ.

2) հիդրոտուրբին-2 հատ:

### **6. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

10. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:

11. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիայով սահմանված որևէ իրավունք և պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարելու, զիջելու կամ այլ կերպ փոխանցելու մեկ այլ անձի:

12. Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

14. Լիցենզավորված անձը լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայտեր դառնալու կամ լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ միավորվելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

15. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը նույն կամ մեկ այլ լիցենզավորված անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս ձեռք բերելու կամ փայտանակցություն ունենալու, ինչպես նաև 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր վաճառելու գործարքի իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

16. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու օրվանից 15 աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձն այդ մասին պարտավոր է գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:

17. Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իրականացնել իր տնօրինության տակ գտնվող սարքավորումների շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը՝ ապահովելով քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

19. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության ընթացքում օգտագործվող սարքավորումների համապատասխանությունը Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և Լիցենզիայում նախատեսված պայմաններին:

20. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, ինժեներական կառույցների, էներգատեղակայանքների և զծերի մատչելիությունը Հանձնաժողովի և օրենքով սահմանված այլ մարմինների ներկայացուցիչների համար:

21. Բացառությամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների եզրակացությունների (ակտերի), Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները (ակտերը)՝ եզրակացությունների (ակտերի) ստացման պահից 23 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից առաջադրված ծրագրով և ժամկետներում իրականացնել տեխնիկական աուդիտ՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցված անկախ փորձագետների ներգրավմամբ: Աուդիտի հետ կապված ծախսերը կատարվում են Լիցենզավորված անձի կողմից:

23. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:

24. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:

25. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը պետք է առանձնացված լինի Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից:

26. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունները հրապարակային են, եթե դրանք Լիցենզավորված անձի

կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

27. Այն դեպքում, երբ Հանձնաժողովն ուսումնասիրում է Լիցենզավորված անձի կամ այլ անձանց կողմից ներկայացված որևէ հայտ, հարցադրում կամ դիմում-բողոք, մամուլում կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հաղորդագրություն կամ տեղեկատվություն, Լիցենզավորված անձը, Հանձնաժողովի պահանջով, պարտավոր է ներկայացնել սպառիչ տեղեկատվություն:

28. Լիցենզավորված անձը պարտավոր է տասն աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Հանձնաժողովի գրավոր հարցադրումներին, եթե Հանձնաժողովի կողմից այլ ժամկետներ սահմանված չեն:

29. Լիցենզավորված անձը ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի հունվարի 1-ը, պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել «ՀԱԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նախագիծը և նախահաշիվը, նախագծի տեխնիկական և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննությունները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրաէներգիա արտադրող կայանների միանալու կարգի համաձայն ստացված՝ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միանալու տեխնիկական պայմանների պատճենը:

30. Լիցենզավորված անձը մինչև Լիցենզիայի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ժամկետի ավարտը պարտավոր է կատարել կարգաբերման-գործարկման աշխատանքներ՝ համաձայն Արցախի Հանրապետության օրենսդրության և առաքել էլեկտրական էներգիան էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման լիցենզիա ունեցող անձին:

31. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև Լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

32. Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) վաճառքի սակագները սահմանում է Հանձնաժողովը: Սակագների սահմանումն ու վերանայումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հանձնաժողով ներկայացնելու այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ Հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և Շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:

34. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված էներգամատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրերը պետք է համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին կամ պարտադիր պայմաններին: Այդ պայմանագրերն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

35. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

36. Լիցենզավորված անձը պարտավոր է կատարել Համակարգի օպերատորի օպերատիվ հրահանգները՝ ըստ Հանձնաժողովի կողմից հաստատված կարգի և նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների:

37. Լիցենզավորված անձը պարտավոր է աջակցել Համակարգի օպերատորի կողմից իրականացվող՝ էլեկտրական ցանցի հուսալիությունն ու անվտանգությունն ապահովող, Լիցենզավորված անձի սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնումներին, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով ու պայմանագրերով սահմանված կարգով ապահովել այդ սարքերի շահագործումը, կատարել դրանց նորոգման, փոխարինման և այլ անհրաժեշտ աշխատանքներ, ինչպես նաև աջակցել իր տնօրինության տակ գտնվող այլ Անձանց սեփականությունը հանդիսացող պաշտպանիչ սարքերի, կարգավորիչների գնման իրականացմանը:

## **7. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ**

38. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

39. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն ունեն ազատ մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք:

40. Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

41. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ներքին կանոնակարգը և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

## **8. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ**

42. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

- 1) նախազգուշացում.
- 2) «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.
- 3) Լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

43. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

44. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 42-րդ կետի համաձայն, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

## **9. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

45. Լիցենզիայում փոփոխություններ կարող են կատարվել Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

46. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ Լիցենզիայի վերաձևակերպման համար:

Ի վկայություն սույնի, Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը սույն Լիցենզիան տրամադրել է՝

«ԻՄԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը.

(ընկերության անվանումը)

Ա.Հ. Քաշաթաղի շրջան, ք. Բերձոր, 5-րդ թաղ, տուն 78

(գտնվելու վայրը)

Գործունեության վայրը՝

Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ համայնքի վարչական տարածքն է:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՋՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» հուլիսի 2019 թվականի

N 41-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 54-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ և 24-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 37-րդ և 38-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի հուլիսի 10-ի գրությունը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ԼԵՎ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 54-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում, որոշման հավելվածի 3-րդ կետում և 3-րդ կետի 2-րդ ենթակետում «2034 թվականի օգոստոսի 16-ը» բառերը փոխարինել «2034 թվականի հուլիսի 19-ը» բառերով.

2) որոշման 1-ին կետում և որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «2019 թվականի օգոստոսի 16-ը» բառերը փոխարինել «2019 թվականի հուլիսի 19-ը» բառերով.

3) որոշման հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐՋԻ» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 4576 կիլովատտ է, իսկ էլեկտրական էներգիայի

արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատոր՝ մեկ հատ, գերմանական «AEM» ընկերության 2018 թվականի արտադրության, սինքրոն տիպի, 4576 կիլովատտ հզորությամբ.

2) հիդրոտուրբին՝ մեկ հատ, չեխական «CINK HIDRO ENERGY» ընկերության 2018 թվականի արտադրության, «crossflow» տիպի, 4391 կիլովատտ հզորությամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 20-ից:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Մ. ՎԻՐԱԲՅԱՆ**



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» հուլիսի 2019 թվականի

N 42-Ս

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 55-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ և 24-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ և 38-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ՏՈՒՄ-ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի հուլիսի 3-ի գրությունը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի «ՏՈՒՄ-ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՏՈՒՄ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 55-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում, որոշման հավելվածի 3-րդ կետում և 3-րդ կետի 2-րդ ենթակետում «2034 թվականի սեպտեմբերի 13-ը» բառերը փոխարինել «2034 թվականի հուլիսի 19-ը» բառերով.

2) որոշման 1-ին կետում և որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «2019 թվականի սեպտեմբերի 13-ը» բառերը փոխարինել «2019 թվականի հուլիսի 19-ը» բառերով.

3) որոշման հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «ՏՈՒՄ» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 1,0 մեգավատտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատոր՝ մեկ հատ, ռուսական «Էլեկտրոմաշպրոմսերվիս» ընկերության 2004 թվականի արտադրության, 183-74 եռաֆազ սինքրոն տիպի, 1,0 մեգավատտ հզորությամբ.

2) հիդրոտուրբին՝ մեկ հատ, 2018 թվականի արտադրության, P-950-165 տիպի, 1,0 մեգավատտ հզորությամբ:»:

2. «ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2018 թվականի հուլիսի 4-ի N 1934/1015 գրությամբ տրված թիվ 18-0035 երաշխիքի համաձայն Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի առջև ստանձնած 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 20-ից:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Մ. ՎԻՐԱԲՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» հուլիսի 2019 թվականի

N 43-Ս

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 33-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ և 24-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ և 38-րդ հոդվածները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ԷՆԵՐԳՈ-ՍԹԱՐ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հուլիսի 15-ի գրությունը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 25-ի ««ԷՆԵՐԳՈ-ՍԹԱՐ» փակ բաժնետիրական ընկերությանը «Հոչանց-3» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 33-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետում, որոշման հավելվածի 3-րդ կետում և 3-րդ կետի 2-րդ ենթակետում «2035 թվականի հոկտեմբերի 20-ը» բառերը փոխարինել «2034 թվականի հուլիսի 19-ը» բառերով.

2) որոշման 1-ին կետում և որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «2020 թվականի հոկտեմբերի 20-ը» բառերը փոխարինել «2019 թվականի հուլիսի 19-ը» բառերով.

3) որոշման հավելվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Հոչանց-3» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 4,8 մեգավատտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատոր՝ մեկ հատ, «Խորդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2011 թվականի արտադրության, CI2-1600-6 Y3 սինքրոն տիպի, 1,6 մեգավատտ հզորությամբ.

2) գեներատոր՝ երկու հատ, «Խորդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2012 թվականի արտադրության, CI2-1600-6 Y3 սինքրոն տիպի, յուրաքանչյուրը 1,6 մեգավատտ հզորությամբ.

3) հիդրոտուրբին՝ երեք հատ, «Խորդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի արտադրության, Ֆրենսիս F-1400/78 տիպի, յուրաքանչյուրը 1,4 մեգավատտ հզորությամբ:»:

2. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2018 թվականի հունիսի 8-ի N 421-07 գրությամբ տրված E 18-000305 բանկային երաշխիքի համաձայն Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի առջև ստանձնած 9 500 000 (ինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չավիով երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 20-ից:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Մ. ՎԻՐԱԲՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» հուլիսի 2019 թվականի

N 50-Ս

ք. Ստեփանակերտ

«ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ  
ՂԱՐԱԲԱՂՈՒՄ» ՏՐԱՄԱՐԿՎԱԾ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ N 0024 ԹՈՒՑԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ  
ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 17-Ի ԹԻՎ 48Ս  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին»  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ  
իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 1-ին  
հոդվածի 2-րդ մասը, 37-րդ, 38-րդ հոդվածները և Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական  
մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի  
հունվարի 24-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման  
թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 3Ն  
որոշումը և հաշվի առնելով «Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտե  
Առաքելության Լեռնային Ղարաբաղում» 2019 թվականի հուլիսի 16-ի հայտը՝  
Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական  
մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Երկարաձգել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական  
հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 17-ի ««Կարմիր Խաչի Միջազգային  
Կոմիտե Առաքելությանը Լեռնային Ղարաբաղում» ռադիոհաճախականու-  
թյունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» թիվ 48Ս  
որոշումը «Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտե Առաքելությանը Լեռնային  
Ղարաբաղում» տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործ-  
ման N 0024 թույլտվության գործողության ժամկետը մինչև 2029 թվականի  
հուլիսի 17-ը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական  
հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 17-ի ««Կարմիր Խաչի Միջազգային  
Կոմիտե Առաքելությանը Լեռնային Ղարաբաղում» ռադիոհաճախականու-  
թյունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» թիվ 48Ս  
որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր  
խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հուլիսի 20-ից:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

Հավելված  
Արցախի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը  
կարգավորող պետական հանձնաժողովի  
2019 թվականի հուլիսի 19-ի N 50-Ա որոշման

«Հավելված  
Հաստատված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը  
կարգավորող պետական հանձնաժողովի  
2009 թվականի հուլիսի 17-ի թիվ 48Ա որոշմամբ

**«Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտե Առաքելության Լեռնային Ղարաբաղում» կողմից  
Ստեփանակերտ քաղաքում արքայակային կապի երկրային (ամրակցված) կայանի  
շահագործման համար 986,640 ՄՀց/983,250 ՄՀց հաղորդման/ընդունման  
ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության**

### **Պայմանները**

**(Թույլտվություն N 0024, տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային  
ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական  
հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 17-ի թիվ 48Ա որոշմամբ)**

### **1. Սահմանումներ**

Սույն թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացություններն են՝  
**Հանձնաժողով**՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և  
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով,

**Թույլտվություն ունեցող անձ կամ Լիցենզավորված անձ**՝ «Կարմիր Խաչի  
Միջազգային Կոմիտե Առաքելություն Լեռնային Ղարաբաղում».

**Թույլտվություն**՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն  
փաստաթուղթը, որը հավաստում է ռադիոհաճախականություններ օգտագործելու նրա  
իրավունքը և պարտականությունը.

**Ֆորս-մաժոր**՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք  
ստեղծվել են Լիցենզավորված անձի կամ քից անկախ, ներառյալ (սակայն  
չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր  
ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները,  
պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատե-  
րազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ,  
որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում  
նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ  
դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու,  
թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

### **2. Թույլտվության գործողության ժամկետը**

1. Թույլտվությունն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հուլիսի 17-ից:
2. Թույլտվությունը գործում է մինչև 2029 թվականի հուլիսի 17-ը:

### 3. Ռադիոհաճախականության օգտագործման էությունը կազմող գործառույթները

3. Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Ստեփանակերտ քաղաքում արբանյակային կապի երկրային (ամրակցված) կայանի շահագործմամբ օգտագործել հաղորդման/ընդունման 986,640 ՄՀց/983,250 ՄՀց ռադիոհաճախականությունները՝ հետևյալ տեխնիկական ցուցանիշներով՝

1) արբանյակային կապի երկրային (ամրակցված) կայանի օգտագործման նպատակը՝ տեղեկությունների փոխանակում.

2) արբանյակային կապի երկրային (ամրակցված) կայանի տեղադրման վայրը և տեղադրման վայրի աշխարհագրական կոորդինատները՝ ք. Ստեփանակերտ, Սասունցի Դավթի 57.

3) կայանի աշխարհագրական կոորդինատները՝ E46° 45' 45.74", N39° 49' 0839".

4) արբանյակային ցանցի անվանումը՝ Arabsat 5A@30.5°.

5) արբանյակի տեղակայման կոորդինատները՝ E46° 45'45.74", N39° 49' 0839".

6) հաղորդիչների հզորությունը՝ 10Վտ .

7) հատկացված ռադիոհաճախականությունները՝ 986,640 ՄՀց/983,250 ՄՀց.

8) տեղեկատվության հաղորդման արագությունը՝ Հաղորդիչ՝ 256 կԲիտ/վ;  
Ընդունիչ՝ 3072 կԲիտ/վ.

9) ճառագայթման դասը՝ 100KG1DEN.

10) արեհավաքի տեսակը՝ պարաբոլիկ 1241.

11) արեհավաքի ուժեղացման գործակիցը՝ 42 դԲ.

12) արեհավաքի տրամագիծը՝ 2,4մ.

13) արեհավաքի առավելագույն ճառագայթման ազիմուտը՝ 204°.

14) արեհավաքի տեղի անկյունը՝ 41°:

4. Լիցենզավորված անձը պարտավոր է ամրակցված արբանյակային կապը շահագործել միայն ներարտադրական նպատակների համար:

5. Լիցենզավորված անձն իրավունք չունի իր ներարտադրական ցանցը փոխկապակցելու հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցին:

6. Լիցենզավորված անձն իրավունք չունի ներարտադրական ցանցի միջոցով մատուցելու հատուցելի կամ անհատույց էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ:

7. Լիցենզավորված անձը պարտավոր է ռադիոհաճախականություններն օգտագործել այնպես, որ վնասակար ազդեցություն չունենա այլ անձանց ռադիոհաճախականության օրինական օգտագործման վրա:

8. Թույլտվության 7-րդ կետի խախտման դեպքում Հանձնաժողովը կարող է փոփոխություն կատարել թույլտվության մեջ:

### 4. Լիցենզավորված անձի գործունեությունը

9. Լիցենզավորված անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, Թույլտվության պայմանների և այլ իրավական ակտերի համաձայն:

10. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ զրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

11. Լիցենզավորված անձը պարտավոր է Թույլտվության պայմանների 3-րդ կետում նշված որևէ տեխնիկական ցուցանիշի փոփոխության դեպքում եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված արբանյակային կապի երկրային կայանի տեխնիկական նախագիծը՝ երկու օրինակից:

12. Լիցենզավորված անձը պարտավոր է ամրակցված արբանյակային կապի երկրային կայանի շահագործումից առնվազն երեք օր առաջ գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին շահագործման մասին:

13. Լիցենզավորված անձի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելուց առաջ Լիցենզավորված անձը պարտավոր է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստանալ Հանձնաժողովի համաձայնությունը:

14. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել Թույլտվությամբ հատկացված ռադիոհաճախականությունների արդյունավետ օգտագործումը:

15. Լիցենզավորված անձը պարտավոր է իր տնօրինության կամ տիրապետման տակ գտնվող սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման ընթացքում ապահովել քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:

16. Լիցենզավորված անձը պարտավոր է ռադիոհաճախականությունների շերտում տիեզերական սեգմենտի մուտքի հատկացման մասին արբանյակային կապի օպերատորի հետ կնքված պայմանագրի կամ դրանում կատարված փոփոխությունների պատճենը Հանձնաժողով ներկայացնել պայմանագրի կնքումից կամ փոփոխությունները կատարելուց հետո տասնօրյա ժամկետում:

17. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման վճարները եռամսյակը մեկ անգամ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է իր վերակազմակերպման կամ անվանափոխման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:

19. Լիցենզավորված անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, պարտավոր է իր գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով:

20. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

21. Լիցենզավորված անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ներկայացնելու փաստարկներ և հիմնավորումներ՝ ապացուցելու համար, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «գաղտնապահական տեղեկատվությունը») հրապարակումը կարող է վնասել իր գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունելու կամ մերժելու նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:

22. Լիցենզավորված անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլտվության պայմանների խախտման:

## **5. Գործունեության վերահսկում**

23. Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

24. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործել Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն



իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը պարտավոր է լիովին համագործակցել և աջակցել Հանձնաժողովին:

25. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում իրավունք ունի իրականացնելու Թույլտվության պայմանների պահպանման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգում:

## **6. Պատժամիջոցներ**

26. Լիցենզավորված անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջները կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառելու հետևյալ պատժամիջոցները՝

- 1) տույժերի և տուգանքների կիրառում.
- 2) Թույլտվության փոփոխում.
- 3) Թույլտվության կասեցում.
- 4) Թույլտվության գործողության դադարեցում:

27. Լիցենզավորված անձը Թույլտվության 26-րդ կետի համաձայն չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս-մաժորի հետևանք են:

## **7. Թույլտվության փոփոխություն, ժամկետի երկարաձգում, Թույլտվության կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրում**

28. Ամրակցված արբանյակային կապի երկրային կայանի տեղադրման և շահագործման ընթացքում տեխնիկական ցուցանիշների ցանկացած փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ Թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու կամ նոր Թույլտվություն ստանալու հայտով:

29. Թույլտվության պայմաններում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի կամ Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

30. Թույլտվության կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

## **8. Այլ պայմաններ**

31. Լիցենզավորված անձը պարտավոր է ամրակցված արբանյակային կապի երկրային կայանի տեղադրման շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացնել շինարարական նախագծին, ինչպես նաև տվյալ բնագավառում Արցախի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և իրավական ակտերին համապատասխան:

32. Թույլտվության գործողությունը կարող է դադարեցվել Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:

## **9. Ծանուցում**

33. Թույլտվության վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Լիցենզավորված անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով:

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2019 թվականի հուլիսի 17-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՍԱՄԻՆ**

N 7-Ն

**ՀՐԱՄԱՆ**

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

**ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝**

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշը՝ «Համահայկական յոթերորդ խաղեր», "Seventh pan-Armenian games" թեմայով չորս նամականիշ՝ համաձայն NN 1,2,3 և 4 հավելվածների:


2. Գործողության մեջ դնել՝ «Համահայկական յոթերորդ խաղեր», "Seventh pan-Armenian games" թեմայով չորս նամականիշ՝ սահմանելով համապատասխանաբար անվանագինը՝ 70 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 20 000 հատ, անվանագինը՝ 100 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 20 000 հատ, անվանագինը՝ 120 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 20 000 հատ, անվանագինը՝ 230 ՀՀ դրամ, տպաքանակը՝ 20 000 հատ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**


**Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

«17» հուլիսի 2019 թվական  
ք.Ստեփանակերտ

Հավելված N 1  
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և  
արտադրական ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. հուլիսի 17-ի N 7-Ն հրամանի




Հավելված N 2  
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և  
արտադրական ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. հուլիսի 17-ի N 7-Ն հրամանի



Հավելված N 3  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և  
արտադրական ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. հուլիսի 17-ի N 7-Ն հրամանի



Հավելված N 4  
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և  
արտադրական ենթակառուցվածքների նախարարի  
2019թ. հուլիսի 17-ի N 7-Ն հրամանի



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
2019 թվականի հուլիսի 22-ի

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ,  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ  
ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
2019 թվականի հուլիսի 22-ի

**ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ  
ՑԱՆԿԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N 181-Ն**

**N 6-Ն**

**ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ**

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝**

1. Սահմանել աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ,  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ  
ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ**

2019 թվականի հուլիսի 22-ի

2019 թվականի հուլիսի 22-ի

**Ք. Ստեփանակերտ**

**Ք. Ստեփանակերտ**

Հավելված  
Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի  
2019 թվականի հուլիսի 22-ի N 181-Ն և Արցախի  
Հանրապետության աշխատանքի, սոցիալական  
հարցերի և վերաբնակեցման նախարարի  
2019 թվականի հուլիսի 22-ի N 6-Ն  
համատեղ հրամանի

### ՑԱՆԿ

#### ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ

1. Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ են համարվում Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան որոշակի ժամկետով և անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերի, ինչպես նաև աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի շրջանակներում կատարվող հետևյալ վճարումները (վարձատրությունը)՝

1) աշխատավարձը (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ)՝ ներառյալ.

ա. արտաժամյա աշխատանքի վարձատրությունը,

բ. գիշերային աշխատանքի վարձատրությունը,

գ. հանգստյան և ոչ աշխատանքային (տոնական և հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը,

դ. լրավճարները, հավելումները, հավելավճարները և պարգևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից),

ե. աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները (բացառությամբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում տրվող փոխհատուցման գումարների, այդ թվում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վճարվող ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարների, օգնության գումարների, ինչպես նաև վարձու աշխատողների սոցիալական կարիքների բավարարման նպատակով տրվող գումարների),

զ. պարապուրդի ժամանակ վճարումը, այդ թվում նաև՝ նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապուրդի դիմաց վճարված աշխատավարձը,

է. օրինական գործադուլին մասնակցող աշխատողներին վճարումը,

ը. լրացուցիչ և հատուկ ընդմիջումների վճարումը,

թ. աշխատանքի ծավալի ավելացման դեպքում աշխատանքի վարձատրությունը,

ժ. առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար վճարումը (եթե աշխատողի առողջության ստուգումը պարտադիր է և պայմանավորված է աշխատանքի բնույթով)։

2) ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) վճարովի արձակուրդի գումարները, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելիս (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի գործողությունը դադարեցնելիս) չօգտագործված արձակուրդի համար վճարվող հատուցումը (փոխհատուցումը)։

3) հեղինակային վարձատրությունը (բացառությամբ «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված ռոյալթիների)։

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**  
**ՀՈՒՆԻՍ ԱՄՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ, ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԵՎ ԿԱՍԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

08.07.2019թ.

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն
		համարը	տրման ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը		
<b>ՏՐԱՄԱԴՐՈՒՄ</b>							
1	Ռոբերտ Վլադիմիրի Մարգարյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00718	10.06.2019թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	
2	Յաշա Մարգարի Դավթյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00719	10.06.2019թ.		ԱՀ	անժամկետ	
3	Էռնեստ Ռոբերտի Բեգլարյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00720	10.06.2019թ.		ԱՀ	անժամկետ	
<b>ԴԱԴԱՐԵՑՈՒՄ</b>							
4	ԱՁ Արեգ Անտոնյան	ՏՕՆ00383	23.05.2014թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 03.06.2019թ.
5	Արսեն Յուրիի Հայրապետյանի (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00620	26.03.2018թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 03.06.2019թ.
6	Հայկ Կառլենի Առաքելյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00652	29.06.2018թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 21.06.2019թ.
<b>ԿԱՍԵՑՈՒՄ</b>							
7	ԱՁ Միշա Մովսիսյան	ՏՕՆ00110	02.03.2011թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 04.06.2019թ.
8	ԱՁ Գուրգեն Հարությունյան	ՏՕՆ00117	04.05.2011թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 28.06.2019թ.
9	ԱՁ Կարո Գրիգորյան	ՏՕՆ00119	04.05.2011թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 28.06.2019թ.



10	ԱՁ Բորիս Բալասյան	ՏՕՆ00180	12.03.2012թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 04.06.2019թ.
11	ԱՁ Վլադիմիր Սարգսյան	ՏՕՆ00359	18.03.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 06.06.2019թ.
12	ԱՁ Գարիկ Պետրոսյան	ՏՕՆ00372	28.04.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 27.06.2019թ.
13	ԱՁ Գարիկ Արզումանյան	ՏՕՆ00378	14.05.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 27.06.2019թ.
14	ԱՁ Հենրիխ Մովսեսյան	ՏՕՆ00380	23.05.2014թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 27.06.2019թ.
15	ԱՁ Կարեն Ահարոնյան	ՏՕՆ00381	23.05.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 27.06.2019թ.
16	ԱՁ Հայկ Աղաջանյան	ՏՕՆ00441	29.05.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 08.06.2019թ.
17	ԱՁ Միշա Գրիգորյան	ՏՕՆ00442	29.05.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 06.06.2019թ.
18	Մաքսիմ Պողոսի Հայրապետյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00496	27.05.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 22.06.2019թ.
19	Վարդան Հովհաննեսի Առաքելյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00535	16.02.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 06.06.2019թ.
20	Կարեն Սերգեյի Սևումյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00548	25.04.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 15.06.2019թ.
21	Զատուր Նիկոլայի Անդրասյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00550	15.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 27.06.2019թ.
22	Արսեն Բորիսի Հարությունյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00554	15.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 29.06.2019թ.
23	ԱՁ Արմեն Ավանեսյան	ՏՕՆ00559	24.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 26.06.2019թ.
24	ԱՁ Արթուրիյ Ղազարյան	ՏՕՆ00561	24.05.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 26.06.2019թ.

25	Անուշավան Կառլենի Ազիզյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00642	08.05.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումից հանվել է 25.06.2019թ.
26	ԱՀ Հենրիխ Մնացականյան	ՏՕՆ00081	01.06.2010թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 01.06.2019թ.
27	ԱՀ Արմեն Հովսեփյան	ՏՕՆ00127	16.06.2011թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 16.06.2019թ.
28	ԱՀ Վլադիմիր Աղաբեկյան	ՏՕՆ00128	16.06.2011թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 16.06.2019թ.
29	ԱՀ Արթուր Պետրոսյան	ՏՕՆ00218	29.06.2012թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.06.2019թ.
30	ԱՀ Սամվել Բաղդասարյան	ՏՕՆ00297	07.06.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 07.06.2019թ.
31	ԱՀ Երեմ Պողոսյան	ՏՕՆ00304	27.06.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 27.06.2019թ.
32	ԱՀ Արսեն Կարապետյան	ՏՕՆ00305	27.06.2013թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցվել է 27.06.2019թ.
33	ԱՀ Միեր Սարգսյան	ՏՕՆ00390	20.06.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 20.06.2019թ.
34	ԱՀ Վազիֆ Ավետիսյան	ՏՕՆ00444	17.06.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 17.06.2019թ.
35	Միեր Արամի Այվազյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00563	09.06.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 09.06.2019թ.
36	ԱՀ Բորիս Ջամալյան Անուշավանի	ՏՕՆ00566	09.06.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 09.06.2019թ.
37	ԱՀ Գեղամ Վլադիմիրի Ղուկասյան	ՏՕՆ00645	14.06.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 14.06.2019թ.
38	Ալբերտ Միշայի Դանիելյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00646	14.06.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 14.06.2019թ.
39	Արմեն Հրայրի Սարգսյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00647	14.06.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 14.06.2019թ.
40	ԱՀ Վալերիկ Պողոսյան	ՏՕՆ00648	14.06.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է

							29.06.2019թ.
41	ԱԶ Յուրա Ստեփանյան	SON00649	14.06.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.06.2019թ.
42	ԱԶ Աշոտ Դանիելյան	SON00650	14.06.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.06.2019թ.
43	ԱԶ Սերժիկ Սարգսյան	SON00651	14.06.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.06.2019թ.
44	Վլադիմիր Էդիկի Ամիրխանյան (ֆիզիկական անձ)	SON00653	14.06.2018թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 29.06.2019թ.

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
**2019 թվականի հունիս ամսվա համար**

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

N N	Ֆիզիկական.անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ . համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամկետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծանոթ.
1	«ԹԻՄ» ՍՊԸ ք. Ստեփ, Աղմ. Իսակով փող. 2. 5/30	90043805	ՈՏՀ-1093	07.06.2019	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	03.06.2019	
2	«Կարեն Գասպարյան» ԱԶ ք. Մարտունի, Գ. Նժդեհ 9	91432677	ՔՓՄ-1094	07.06.2019	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	05.06.2019	
3	«ՖԱՆՏԵՔՍ» ՍՊԸ ք. Ստեփ, Մանուկյան 17/17	90042467	ՔՓՄ-1095	14.06.2019	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	12.06.2019	

**Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**  
**2019 թվականի հունիս ամսվա համար**

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգում (եչել երկարաձգված ժամանակահատվածի ավարտման ամսաթիվը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում		Լիցենզիայի գործունեության դադարեցման կամ թույլտվությունը արտոնագիրը չեղյալ համարվելու ամսաթիվը
	Անվանումը	ՀՎՀՀ			Որոշման ամսաթիվը	Մյուս անվանումը		կասեցման մասին որոշման կամ դեպի ամսաթիվը	կասեցումը հանելու մասին որոշման ամսաթիվը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	«ՍՏՐՈՅ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ ք. Ստեփ., Դ. Բեկի փ. տուն 14	90030245	ՈՏՀ- 792	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				07.06.2019		
2	«ՄՕՆ» ՍՊԸ ք. Ստեփ, Հեքիմյան փող., 2գ, բն. 17	90040205	ՇԻ- 983	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				30.06.2019		
3	«ՌԻ-ՄԱ» ՍՊԸ ք Ստեփ, Շիրվանգադե 53	90042038	ՇԻ- 1034	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				14.06.2019		
4	«ԱՍԿԵՐԱՆ ՎԱՅՆ» ՍՊԸ	90073907	ՇԻ-	Շինարարության իրականացում,				22.06.2019		

	ք. Ասկերան, Շահումյան փող 41ա		1037	ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>						
5	«Արգիշտի» ՍՊԸ ԼՂՀ Քաշաթաղի շրջան, գ. Սուս	10002815	ՇԻ-289	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					19.06.2019	
6	«ԱՐԽՏՐԱՎ» ՓԲԸ ք. Ստեփ. փող. Թումանյան 1	90021357	ՔՓՄ-300	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					19.07.2018	
7	«Գ Ա Ն Չ» ՍՊԸ ք. Մարտակերտ, Թումանյանի 24	90144158	ՇԻ-1031	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					17.05.2019	
8	«Ստեփաղկունունախագիծ» ՓԲԸ ք. Ստեփ. Վ. Սարգսյան 6	90004309	ՔՓՄ-447	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>					03.05.2019	
9			ՔՓՄ-175	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					10.03.2019	
10	«ՖՈՐ ԴԻԲԵԿՇԵՍ» ՍՊԸ ք. Ստեփ. Սասունցի Դավիթ 15	90023576	ՇԻ-542	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					10.07.2019	
11	«ՑԱՅՏ ԱՂՑՑՈՒՐ» ՍՊԸ ք. Ստեփ. Ս. Դավիթ 52/21	90024501	ՔՓՄ-962	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>					07.06.2019 (դիմում առ 29.05.2019)	
12	«ԱՐՏԱՇԵՍ» ՍՊԸ ք. Ստեփ, Գ. Նժդեհ փող, թիվ 105	90014938	ՇԻ-979	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					07.06.2019 (դիմում առ 31.05.2019)	
13	«ԳՐՈՒՆՏ» ՍՊԸ ք.	90025435	ՇԻ-	Շինարարության իրականացում,						14.06.2019



